

ՍԻՐՈ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Աստվածաշնչի մեր հայ թարգմանիչները «սէր» են թարգմանել եբրայեցերեն ahabah բառը, որի բայական ձևն է՝ ahab՝ «սիրել»: Ավելի նվազ հաճախականությամբ «սէր» բառով է արտահայտված նաև hapes-ը, որը նշանակում է «սէր»՝ «հաճույք ստանալու», «դուր գալու» իմաստով (Սաղմ. ԾԱ 6) (ավելորդ չէ նշել, որ այստեղից է ծագում հայերեն խոսակցական լեզվի «հավեսը»): «Սիրել» է թարգմանված նաև raham-ը, որն ավելի ճիշտ նշանակում է «ջերմորեն սիրել». այն ավելի սահմանափակ իմաստային ծիր ունի (Աստծուն ստորոգվելիս ձեռք է բերում «գթալու» իմաստ՝ Ելք ԼԳ 19, և մեծ մասամբ օգտագործվում է՝ նշելու համար մարդու սերն առ Աստված՝ Սաղմ. ԺԷ 2): Ahab բառով եբրայեցին կարող է արտահայտել հոր սերն իր զավակի նկատմամբ (Ծնն. ԻԲ 2), ամուսինների սերը միմյանց հանդեպ (ԻԴ 67). այն կարող է արտահայտել նաև բարեկամություն (Ա Թագ. ԺԸ 1, 3), ծառաների կապվածությունն իրենց տիրոջը (Ելք ԻԱ 5) կամ նույնիսկ սեռական ցանկություն (Բ Թագ. ԺԳ 1, 4, 15): Սակայն կարող է նշանակել նաև սեր ընկերոջ (Ղևտ. ԺԹ 19) կամ օտարական պանդուխտի (ԺԹ 34) և ամեն ինչից վեր՝ Աստծո նկատմամբ: Այն կարող է օգտագործվել նաև նշելու համար այն զգացմունքը, որ Աստված տածում է մարդկանց, հատկապես Իսրայելի ժողովրդի նկատմամբ (Բ Օր. Դ 36):

Աստվածաշնչում «սէր» կամ «սիրել» բառով արտահայտված զգացմունքային շերտերն իրենց ամբողջության մեջ հասկանալու համար անհրաժեշտ է դիմել նաև վերջինիս հունարեն «Յոթանասնից» թարգմանությանը: Այստեղ հետաքրքիր է այն փաստը, որ ahab բառի երանգավորումներն արտահայտելու Յոթանասնից թարգմանությունը միայն մեկ կամ երկու անգամ է կիրառում eros կամ erasthai բառերը, թեև սրանք դասական ու հելլենիստական հունարենում ամենահաճախակի օգտագործված տերմիններն էին. հազվադեպ են նաև philia և philein տարբերակները: Մինչ agapesis կամ agapan բառերի կիրառությունը գրեթե համընդհանուր է. այս առումով ան-

հրաժեշտ է նշել, որ այս վերջին բառերը ավելի քիչ են լիցքավորված զգացմունքայնությամբ, քան նախորդները: Աստվածաշնչից դուրս օգտագործվելիս հրանք նշանակում են սիրո մի ողջախոհ ձև՝ որևէ անձի կամ իրի բարձր արժեք հաղորդելու կամ նրանց հարգանքով ընդունելու իմաստով: Սուրբ Գրքում, սակայն, հրանք ձեռք են բերում մի կրոնական բովանդակություն, որը շատ առումներով նոր է: Սրա վառ վկայությունը գոյացական agape բառի ներմուծումն է, որի նախաաստվածաշնչյան օգտագործման մասին ոչինչ հայտնի չէ և հավանական է, որ այս բառը կերտվել է հենց Աստվածաշնչի թարգմանության ընթացքում: Սա պատահականություն չի կարող լինել, ոչ էլ թարգմանչի քմահաճություն, այլ անհրաժեշտություն, որովհետև թարգմանիչն իր առջև ունեցել է ավելի շատ աստվածաբանական, քան զուտ թարգմանական խնդիր: Այս իրողությունը անհրաժեշտ է հաշվի առնել եզրույթի աստվածաբանական մեկնաբանության ընթացքում, քանզի լեզվաբանության պատմության մեջ այս փաստի նշումը արժեքավոր է գըլխավորապես նրանով, որ ցույց է տալիս, թե սիրո աստվածաշնչական վարդապետությունը ինչպես է էականորեն տարբերվում այդ նյութի մասին հեթանոսական գաղափարներից:

Ս. Գրքում սիրո ենթակայական կամ առարկայական դրսևորումները ի հայտ են գալիս մի քանի երեսներով: Ուստի նախ և առաջ անհրաժեշտ է ծանրանալ այդ երեսների քննարկման վրա:

Աստվածաշնչական միտքն ի սկզբանե ստվածակենտրոն, կարելի է ասել «աստվածապետական», կողմնորոշում ունի, ուստի կենտրոնական նյութը Արարիչ և Տեր Աստծո գաղափարն է, Որը նաև մարդկության փրկիչն ու դատավորն է: Այս պատճառով առաջին հերթին անհրաժեշտ է խոսել այն սիրո մասին, որն ստորոգվում է ուղղակի Աստծուն:

1. Աստծո սերը մարդկանց հանդեպ: Մարդկանց նկատմամբ աստվածային սիրո դրսևորումները վկայված են Աստվածաշնչի նույնիսկ ամենավաղ հատվածներում: Թեև այն հազվադեպ է բառացի արտահայտվում, այնուամենայնիվ անուղղակի կերպով, սակայն հստակորեն պատկերված է այն բազմաթիվ պատմությունների մեջ, որոնք վերաբերում են մարդկային կյանքում Իր ունեցած միջամտություններին:

Նախ և առաջ արարչագործությունն ինքը համարվում է Աստծո բարության և սիրո պտուղը (Ծնն. Ա 4, 10, 31, տես նաև Սաղմ. ՃԼԵ 1—9, Սիրաք ԺԶ 26—30): Սակայն սիրո և բարության գլուխգործոցը մարդու արարումն է, ում Աստված ստեղծում է Իր «պատկերով եւ նմանութեամբ» (Ծնն. Ա 26, Թ 6, Իմաստ. Բ 23), օժտում է աստվածային պարգևներով և բնակեցնում երանության պարտեզում (Ծնն. Բ 7):

Նույնիսկ երբ մարդն իր անմտության պատճառով կորցնում է դրախտն ու դառնում մի պարզ մեղավոր, Աստված բացարձակ կերպով չի մերժում նրան, այլ խոստանում է փրկել ապագայում (Ծնն. Գ 14): Այս պատճառով է, որ ընդհանրական ապականության մեջ Նոյը «շնորհ է գտնում Եհովայի առջև» (Զ 8) և իր սերնդի հետ արժանի է համարվում օրհնության ուխտին՝ ջրհեղեղից հետո (Թ 1—17):

Հետագայում Աստված Իր պաշտպանության տակ է վերցնում Աբրահամին և ուխտ կնքում նրա հետ, որը հիմնված էր փոխադարձ հավատարմության վրա (ԺԵ 6): Այդ ուխտը վերանորոգվում է հաջորդ նահապետների հետ (Իսահակի հետ՝ Ծնն. ԻԶ 3—6, և Հակոբի հետ՝ ԻԸ 13, ԼԵ 11);

Այն հայրական սերը, որ Եհովան տածում է Իսրայելի՝ Իր «անդրանիկի» նկատմամբ (Ելք Դ 22), հոյակապ և աքանչելի կերպով բացահայտվում է եգիպտական ստրկությունից հրաշալի փրկության պատմության մեջ (Բ Օրին. Ա 30): Եվ հայրական սիրո այս դրսևորումը Իսրայելի մոտ մշտապես վերակոչվում է կա՛մ որպես երջանիկ գոհության նյութ (Ելք ԺԵ 1—18), կա՛մ որպես հիմք՝ հորդորների համար (Բ Օրին. Դ 32—38, ԼԲ 1—47, Հեսու ԻԴ 2—13): Նույն ձևով Սինայի ուխտը, որով Եհովան Իսրայելին ընտրում է որպես «Իր սեպհական ժողովուրդը», որպես «քահանայից թագավորություն» և «սուրբ ազգ», Իր գթության, բարության և սիրո դրսևորումն է (Ելք ԺԹ 4, ԼԴ 9, Բ Օրին. Դ 31, Է 7—8):

Այնուամենայնիվ, Աստծո սիրո ողղակի արտահայտությունը նույնպես Հնգամատյանից չի բացակայում: Այսպես, Երկրորդումն Օրինաց գրքում կարդում ենք, որ բոլոր մեծահրաշ գործերը Իսրայելի մեջ Աստված կատարում է «վասն սիրելոյ» (Դ 36, Է 8, Ժ 15): Մյուս կողմից մարդկանց նկատմամբ Աստծո սիրառատ վերաբերմունքը հաճախ արտահայտվում է նաև ազգակից տերմիններով, ինչպես «շնորհ գտնել» (Ծննդ. Զ 8, ԺԹ 19, Ելք ԼԳ 19), «ողորմել» (Ծննդ. ԼԳ 5, 11, ԽԳ 29, Ելք ԼԳ 19), «ողորմություն գտնել» (Ծննդ. ԺԹ 19, Ելք Ի 6, Բ Օրին. Ե 10, Է 9, 12), «ներել» (Թվոց ԺԴ 19), «գթալ» (Ելք ԼԳ 19, Բ Օրին. ԺԷ 18, Լ 3) և այլն, որոնք նույնպես անուղղակի կերպով հավաստում են աստվածային սիրո մասին:

Քանի որ Եհովան միևնույն ժամանակ ուխտի «հավատարիմ» կամ «վստահելի» Աստվածն է (Բ Օրին. ԼԲ 4), Նրա տիրապետությունը բնութագրվում է որպես «արդարութիւն ու ճշմարտութիւն» (Ծննդ. ԻԴ 27, տես նաև ԻԴ 12), որն աստիճանաբար անսայմանավոր ու անվերապահ բանաձևի ուժ է ստանում (Բ Թագ. Բ 6, Սաղմ. ԻԴ 10, ԼԹ 11 ևն, Միք. Է 20, Տոբիթ Գ 2 ևն): Հին Իսրայելի մոտ Աստծո գաղափարի համար տիպական է հետևյալ ասույթը. «Տէր Աստուած գթած և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ, որ պահէ զարդարութիւն և առնէ զողորմութիւն ի հազար ազգս, բառնայ զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս և զմեղս, և ոչ անպարտ առնէ զպարտաւորն» (Ելք ԼԴ 6—7, տես նաև Սաղմ. ԶԶ 15, ՃԳ 8, ՃԺԱ 4 ևն):

Այսպես, Հին Կտակարանի վաղ հատվածները կարծես թե ճանաչում են Աստծո գթացող ու ներող սերը և դրա արձագանքները տեսնում են անգամ այն տառապանքների մեջ, որոնք ուղարկված են որպես պատիժ, քանզի Աստծո նպատակը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ մարդկանց իրենց ամբարիշտ ճանապարհներից վերջնականապես հետ դարձնելը (Ղևտ. ԻԶ 40—45, Թվոց ԺԴ 20—25, Բ Օրին. Դ 25—31, Լ 1—10):

Աստծո սերն իր բնությամբ անմիջական է ու ազատ (Ելք ԼԳ 19), սակայն այդ սիրո պտուղը հանդիսացող Ուխտի համաձայն Աստված ակնկալում և պահանջում է, որ մարդը հարատևի Իր կամքի մեջ, պահի Իր պատվիրանները և փոխադարձաբար սիրի Իրեն: Սա իր արտահայտությունն է գտնում Աստծո սիրո մասին հայտարարող ամենավաղ հատվածում. «Ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց որդւոց յերիս և ի չորս ազգս ատելեաց իմոց. և առնեմ զողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց, և ոյք պահեն զհրամանս իմ» (Ելք Ի 5—6): «Նախանձը» կամ «նախանձոտությունը» այստեղ օգտագործված են պարզապես Աստծո սիրո անպայմանական բնույթն ու խորքերը նշելու հիմնական նպատակադրումով: Սակայն այստեղ բնորոշ կողմը մեկ անգամ ևս պետք

կապն է Աստծո պատժիչ արդարության ու ողորմած բարության միջև: Ամեն դեպքում այն ենթադրում է փոխադարձ սեր մարդու կողմից, որն իրականանում է ոչ այլ կերպ, քան պատվիրանների պահպանությամբ:

Պատմության ընթացքում Եհովան հաստատուն կերպով ցույց է տալիս Իր սիրո թարմ օրինակները՝ ընտրության, շնորհի և գթության շերտերով, ընդհանրապես իսրայելացիների և հատկապես Դավթի ու իր տան հանդեպ, որը մշտապես ապահովվում է այն իրողությամբ, որ նրանք իրենց հերթին հավատարիմ մնան ուխտին և չպաշտեն օտար աստվածների (Ա Թագ. Բ 1—10, Նեեմ. Ա 5—11 ևն): Սակայն հիմնականում մարգարեների մոտ է, որ Աստծո սերը երևան է գալիս ամենայն հստակությամբ, և որը նրանց կողմից քարոզվում է մեծագույն ուժով ու հատոզվածությամբ:

Ի հակադրություն «մեռյալ կուռքերի» (Երեմ. ԺԱ 12), որոնք «գարշելի են» (Եսայի Բ 8), միայն Եհովան կարող է օգնություն ու փրկություն շնորհել (Եսայի ԼԸ 6, Երեմ. ԺԶ 9, Ովսե Ա. 7, Եզեկ. ԺԳ 21): Քանզի Իր բարությունը «յաւիտեան» է (Երեմ. ԼԳ 11), անգամ եթե այն մշտապես համակցված է արդարությամբ (Թ 24): Մյուս կողմից, սակայն, այս սերը հաճախ ուղեկցվում է կարեկցանքի գաղափարի հետ (Ովսե Բ 21, Եսայի ԾԴ 8, Զաք. Ա 16), որն առատ է ներումով (Եսայի ԾԵ 7, տես նաև Միք. Է 19), թեև միայն այն դեպքում, եթե մեղավորը զղջացել ու ապաշխարել է (Ովսե Ա 6, Երեմ. ԻԱ 4—7, Եզեկ. ԺԸ 27):

Այսպես է, որ Ամբակումը կարող է իրականում Աստծո ցասումը միացնել Նրա կարեկցանքի հետ (Գ 2, տես նաև Նավում Ա 2—3): «Զի Աստուած եմ ես՝ եւ ոչ մարդ» (Ովսե ԺԱ 9, Եզեկ. ԼԶ 22, 32)՝ սա է Իր անընմբռնելի ողորմության գլխավոր հիմքն ու շարժառիթը: Սրա մեջ մենք կարող ենք նշմարել աստվածային բնության հայտնության քողարկված ակնարկը: Աստծո սերը մարդկանց հանդեպ սոսկ արարչի սեր չէ իր ստեղծագործության նկատմամբ (Եսայի ԽԳ 1—7, 21), այլ այն հիմնավորապես ու գլխավորապես հայրական սեր է (Ովսե ԺԱ 1—4, հմմտ. Եսայի Ա 4, Երեմ. Գ 19). անշուշտ այն նույնիսկ ավելին է, քան մոր սերն իր զավակի նկատմամբ (Եսայի ԽԹ 15, հմմտ. ԿԶ 13, Մաղ. Ա 6): Բավական հաճախակի մարգարեները «սիրել» բառն օգտագործում են այս ջերմ մտերմության գիծն արտահայտելու համար (Ովսե Թ 15, Մաղ. Ա 2): «Սիրելու» ու «ողորմելու» սերտ կապը, որպես այս որակական էության արտահայտություն, մասնավորապես հստակ է Աստծո կողմից Իսրայելին հասցեագրված Երեմ. ԼԱ 3-ի խոսքերից. «Սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն»: Եսայի ԿԳ 9-ի պատգամը նման է սրան. «Վասն սիրելոյ զնոսա և խնայելոյ ի նոսա ինքնին փրկեաց զնոսա, և վերացոյց զնոսա և բարձրացոյց զամենայն աւուրս յաւիտենից»:

Այս վերոհիշյալ հատվածներում փրկչաբանական հիմնական մտքերն ընդգծված են, որը նաև կապված է Աստծո պատկերի հետ որպես «Իսրայելի հովիվ» (Ովսե Դ 16, Միք. Բ 12), «բժիշկ» (Եսայի Լ 26, Երեմ. Գ 22, Ովսե Զ 1) կամ «փրկիչ» (Եսայի ԽԳ 3, Ովսե ԺԱ 3 ևն), սակայն գլխավորապես որպես ամուսին, որը ձգտում է հետ բերել իր անհավատարիմ կնոջը, քանզի վերջինս հարաբերության մեջ է մտել ուրիշ աստվածների հետ՝ որպես «սիրեկանների» (հատկապես Երեմ. Բ, Ովսե Բ 4—15, Գ 1—5, Եզեկ. ԺԶ 23): Եթե նա խոստովանի իր հանցանքը և անկեղծորեն վերադառնա իր տիրոջ մոտ, ամուսինը նրան գթասրտորեն կընդունի (Երեմ. Գ 12, Եզեկ. ԺԶ 53—63, Ովսե Բ 16—25, Եսայի ԾԴ 5—8): Պատկերների

այս խումբը, որը հավանաբար կապված է հին Մերձավոր Արևելքում տիրող աստվածների ամուսնության կամ «սրբազան ամուսնությունների» գաղափարների հետ, ծառայում է Եհովայի ու Իսրայելի ուխտը որպես սիրո կենդանի միություն բնութագրելուն:

Հին Կտակարանում աստվածային սիրո ամենալիակատար հայտնությունն անվիճելիորեն ներկայանում է տառապող Մեսիայի՝ «Տիրոջ Ծառայի» կերպարի մեջ, որն Իրեն տալիս է որպես քավության զոհ անհավատ ժողովրդի համար (Եսայի ԽԲ 1—9, Ծ, ԾԳ): Այստեղ փրկության պատմության դինամիզմը, որը ներհատուկ է սիրո Հինկտակարանյան գաղափարին, լիովին ի հայտ է գալիս: Քանզի Տիրոջ Ծառայի ինքնազոհաբերությամբ հաստատված «նոր» կամ «յաւիտենական» ուխտը (Եսայի ԾԴ 8—10, Երեմ. ԼԱ 31—37, ԼԳ 19—26) բոլոր ժողովուրդներին միավորելու համար է (Եսայի Բ 2—5, Երեմ. Գ 17, Միք. Դ 1—7, Սոփ. Գ 9, Զաք. Թ 10, Մաղ. Ա 11):

Աստծո գաղափարը Սաղմոսներում ու Իմաստության գրքերում նույնպես իր էական գծերի մեջ ներշնչված է Եհովայի անսասան բարության և Իր ժողովրդի նկատմամբ ուխտի հավատարմության գիտակցությամբ (Սաղմ. ՁԹ 4, ՃԳ 17, Իմաստ. ԺԲ 19—22, Սիրաք Ծ 19—24): Միևնույն ժամանակ մի թարմ շունչ է հաղորդվում անհատ մարդու հանդեպ Եհովայի սիրո շեշտադրումով (Սաղմ. Դ 1, ԻԵ 6, ՃԺԹ 76, ՃԽԳ 12, ՃԽԶ 8): Վերջիններս իրենց վստահորեն ենթարկում են Իր խնամքին, և այդ պատճառով կոչվում են Աստծո «որդիներ» (Սաղմ. ԻԹ 1, Իմաստ. Ե 5, ԺԶ 26) ու «սիրելիներ» (Սաղմ. Կ 7, ՃԸ 6, ՃԻԷ 2, Իմաստ. Է 27): Սակայն Նրա «յաւիտենական» ողորմությունը (Սաղմ. Ճ 5, ՃԼԶ) տարածվում է ոչ միայն մարդկության, այլև բոլոր արարածների վրա (ՁՁ 5, ՃԽԵ 9, 16, Իմաստ. ԺԱ 24—26): Իր անբեկանելի արդարությունը մշտապես ուղեկցվում է բարությամբ, որով Նա օգնում է մարդկանց, երկայնամտությամբ, որով Նա շնորհներ է բաշխում նրանց, և, ինարկե, Իր համբերությամբ ու ներելու Իր պատրաստակամությամբ (Սաղմ. ԼԶ 7, ՃԽԵ 7—21, Իմաստ. ԺԲ 8—18, Սիրաք ԺԸ 1—14):

Իմաստության գրքերում աստվածային սերը հայտնվում է ոչ այն տեսքով, ինչպես մարգարեների մոտ, որտեղ այն շնորհվում է ազատ, անմիջական ու անկայմանական կերպով, այլ ավելի շուտ որպես Աստծո պատասխան մարդու հնազանդ խոնարհությանը և Իր օրենքների նկատմամբ հավատարմությանը (Առակ Ը 17, 21, ԺԵ 9, Իմաստ. Դ 10, Սիրաք Դ 14):

2. Մարդկանց սերն առ Աստված: Հին Կտակարանում այն սերը, որ Աստված հեղում է մարդկանց և ամենից վեր ընտրյալ ժողովրդի վրա, հիմնականում հասկացվում է որպես հավատարմություն Ուխտի նկատմամբ: Այս տեսանկյունից զարմանալի չէ, որ մարդկանց փոխադարձ սերը նմանապես հասկացվում է որպես ուխտի պարտականություններից ամենաէականը: Այս պատճառով է, որ այս փոխադարձ սերն առաջին հերթին ընկալվում է որպես «պատուիրան»՝ պատվիրան իր բացարձակ հիմնական իմաստով, որը սերտորեն կապված է Աստծո պաշտամունքի (նեղադրյալ ծեսը) և Ուխտի Օրենքի մնացյալ հոդվածների պահպանության հետ (տես Ելք Ի 6, Բ Օրին. Զ 2—9, Հեսու ԻԳ 6—16): Ուստի Աստծո սերը գրեթե անլուծելի կերպով միախառնված է Աստծո երկյուղի հետ (Բ Օրին. Ժ 12, ԺԳ 4), և այն արտահայտվում է ինչպես միակ ճշմարիտ Աստծո դավանությամբ, այնպես էլ կռապաշտության ցանկացած տեսակի բացարձակ մերժմամբ (Ելք Ի 2—6, Բ Օրին. Դ 19):

Այս ամենով, սակայն, մարդու սերն առ Աստված հեռու է բացարձակ օրենսդրականությամբ կամ ծեսի արտաքին պահպանմամբ արտահայտվելուց. ընդհակառակը, այն ներառնում է ամբողջական մարդուն՝ իր բոլոր զորություններով. այն պետք է բխի «յամենայն սրտէ իւրմէ» (Բ Օրին. Դ 29) և պետք է առաջնորդի Աստծուն «յարելու» (Բ Օրին. Ժ 20, Հեսու ԻԲ 5, Դ Թագ. ԺԸ 6). այն պետք է լինի կենդանի ու շարժուն: Աստծո նկատմամբ գոհություն (Բ Օրին. Ը 1—10, Հեսու ԻԲ 4) ու վստահությունը (Ծննդ. ԺԵ 6, Բ Օրին. Ժ 12, Ա Թագ. ԺԴ 6) այդպիսի ներքին սիրո էական հատկություններն են:

Մարգարեները հնարավոր մեծագույն շեշտը դնում են այս ավելի խոր ազդակների վրա և պարզորոշ կերպով բացահայտում դրանք: Նրանք դատապարտում են պաշտամունքի զոհաբերական ձևերի ու թվացյալ բարեպաշտության արտաքուստությունը (էքստերնալիզմ) (Եսայի Ա 10—15, Երեմ. Է 21—28, Եզեկ. ԼԳ 10—20, Ովսե Զ 6, Միք. Զ 6) և հարկ եղած դեպքում անկեղծ բարեպաշտություն են պահանջում (Ովսե Դ 1, Զ 4—6): Ուստի ընդանք կրկին ու կրկին վերակոչում են արտի ճշմարիտ դարձը (Եսայի Ա 16—20, Երեմ. Գ 12, Եզեկ. ԺԸ 30, Ամոս Ե 14, Հովել Բ 12, Հովնան Դ 2): Այս ամենի մեջ սերն առ Աստված շարունակում է ըստ էության նշանակել հավատարմություն Եհովայի ուխտին, որն իրական պետք է դառնա պատվիրանների պահպանությամբ (Երեմ. Բ 2, Եսայի ԾԶ 6):

Մտածողության այս գիծն ավելի հեռուն է գնում Սաղմոսներում, որոնք, համաձայն իրենց գրական բնույթին, որպես աղոթք-օրհներգություններ, ընդհատակաուղղված են հիմնականում արտահայտելու սերն առ Աստված՝ գոհության ու վստահության երանգավորումով (Ե 12, ԼԱ 24, ՂԷ 10 ևն): Այս սիրո ներքին խորքերը շեշտվում են հատկապես ԺԸ 1-ում և ՂԱ 14-ում. և Աստծո մոտիկ ու տեսանելի լինելու ընդհանրական պահանջը մասնավորապես գերակշռում է այս օրհներգություններում (ԻԷ 8, ԽԲ 2, ՀԳ 23—28):

Իմաստության գրքերում նույնպես հանդիպում ենք «խորհրդական» (միստիկ) մոտեցման. «Յուսացեալք ի նա իմասցին զճշմարտութիւն, եւ հաւատարիմք՝ սիրով ակն կալցին նմա. զի շնորհք եւ ողորմութիւն ի վերայ սրբոց նորա, եւ այցելութիւն ի վերայ ընտրելոց նորա» (Իմաստ. Գ 9): Իմաստության սերը, որը, վերջին հաշվով, էականորեն սեր է Արարչի նկատմամբ (Սիրաք Է 30, ԽԷ 8), առաջնորդում է «մոտիկության» (Իմաստ. Զ 19) և «բարեկամության Աստծո հետ» (Է 14), ինչպես նաև Նրա հետ «ապրելու» (Ը 3, տես նաև Սիրաք Բ 3՝ «միանալ Նրա հետ»). բայց միևնույն ժամանակ այն բաղկացած է պարզապես պատվիրանների պահպանությունից (Իմաստ. Զ 18): Իհարկե, սերն ինքնին օրենքի պահպանություն է, որը ջնջում է մեղքի պարտքը (Առակ ԺԶ 6) և պարգև է խոստանում (Սիրաք Բ 8): Առ Աստված սիրո ծիսական բնագավառն հայտնվում է Սիրաք Դ 14-ում, որտեղ այն նույնացված է «Սուրբի ծառայության» հետ: Այսպիսով եբրայեցիների հետգերության շրջանի բարեպաշտության մեջ Տիրոջ երկյուղն ու վստահությունը միավորված են Նրա անսասան հայրական սիրո հետ (Առակ Գ 5—7, Սիրաք Բ 7—18, Է 30):

Ց. Մարդկանց սերը միմյանց նկատմամբ նմանապես սկզբունքորեն հիմնավորվում է Ուխտի գաղափարներով: Սակայն այս սիրույն արժանի են համարվում առաջին հերթին և առավելապես բարեկամ իսրայելացիները,

ովքեր հավասարապես ուխտ են կնքել Եհովայի հետ: Ուստի փոխադարձ «հաստատուն սիրո ու հավատարմության» սկզբունքը (Ծննդ. ԻԴ 49, Հեսու Բ 14 և) վերաբերում է նաև մարդկային այս հարաբերություններին: Խորքում համերաշխության ուժեղ զգացումն է, որը հատկապես զարգացել է հասարակության նահապետական համակարգում: Միևնույն նախահորից սերված լինելու փաստը մարդուն ստիպում է իր ժողովրդի ներկայացուցիչներին ընդունել որպես «եղբայրների» և ակնհայտորեն իրեն կապված զգալ նրանց հետ՝ բնական ու ընտանեկան կապերով (Ղևտ. Ժ 6, Հեսու Բ 12, Ա Թագ. Լ 23, Տովբիթ Ա 3, Մաղ. Բ 10): Ուստի անգամ Հին Կտակարանում մերձավորի նկատմամբ սերը չի սահմանափակվում սիրելու սառը օրինական ձևի մեջ, այլ ընդունում է անկեղծ եղբայրական զգացման բնույթ (Ղևտ. ԺԹ 17, Սաղմ. ՃԼԳ 1, Սիրաք ԺԳ 16, Ա Մակ. ԺԲ 17):

Ի տարբերություն սրա, էական կրոնական բնագավառը մասնավորապես ուժեղ է հանդես գալիս այն փաստով, որ այն վավերացվում է Եհովայի հեղինակությամբ (Ղևտ. ԺԹ 10), ուստի և բարձրանում է «Աստծո ծառայության» կարգավիճակի՝ անշուշտ միացած լինելով առ Աստված սիրուն (Բ Օրին. Ժ 17, Եսայի ԾԸ 6, Միք. Զ 8, Զաք. Է 9, Տովբիթ ԺԴ 11): Այս պատճառով մերձավորի նկատմամբ ունեցած անկեղծ սերը երբեք չի կարող մնալ սոսկ զգացմունքային ազդակի աստիճանի վրա, այլ պետք է իրականանա գործով: Ավելին, հատկանշական է, որ այն նեղ իմաստով չի սահմանափակված բարեկամ իսրայելացիներով, այլ, ընդհակառակը, աստվածային թելադրանքով այն տարածվում է նաև օտարների վրա (Ելք ԻԳ 9, Ղևտ. ԺԹ 33, Բ Օրին. Ժ 19): Անգամ թշնամիները չպետք է անտեսվեն (Ելք ԻԳ 4, Առակ ԻԴ 17). և ընդհանրապես համբերությունն ու ներելու պատրաստակամությունը փոխարինում են կործանիչ ատելությանը (Ղևտ. ԺԹ 17, Առակ ԺԶ 7, Սիրաք ԻԷ 30—ԻԸ 7): Սակայն սրան հակառակ «ակն ընդ ական» դեռ մնում է ուժի մեջ որպես ընդհանուր սկզբունք (Ղևտ. ԻԴ 17—21), և սերը պարփակվում է ազգային սահմաններում:

Մինչև հետգերության շրջան ոչ մի փոփոխություն տեղի չի ունենում, և միայն հետո է, որ այն ձեռք է բերում փիլիսոփայական ու համամարդկային (կոսմոպոլիտ) ուղղվածություն (Իմաստ. ԺԲ 20, Սիրաք ԺԳ 19)՝ հավանաբար հելլենիստական կամ ավելի ճիշտ ստոյիկյան էթիկական ուսմունքի ազդեցությամբ:

4. Եզրակացություն: Դժվար է համարժեքորեն ժամանակակից լեզվով արտահայտել այն, ինչը Հին Կտակարանում արտահայտված է ahab կամ agapan բառերի ու նրանց ածանցյալների օգտագործումով, ուստի վերջինս հաճախ յուրացվել է որպես փոխառություն: Հայերեն «սէր» բառը շատ առումներով բավական անորոշ է և չափից ավելի է ծանրաբեռնված, քանզի այն համարժեք է համարվում բոլոր դեպքերի համար և չի կարող հավելումներ ու բացատրական ծանոթագրություններ ենթադրել: Գրեթե բոլոր արտահայտությունները չափազանց նեղ ու միակողմանի են թվում, որովհետև Աստվածաշնչում նկատի առնված սերը սոսկ բնազդային կամ պարզապես զգացմունքային ազդակ չէ: Այն ավելի շուտ պետք է հասկացվի որպես ողջ էության շարժում, որը բխում է «ողջ սրտից» և որի մեջ ներգրավված են մարդու բոլոր զորությունները, ներառյալ մասնավորապես իմացական բնագավառները: Ուստի «սէրը» սերտորեն կապված է ոչ միայն սեռական

(Ծննդ. Դ 1), այլև հոգևոր ու կրոնական ոլորտի հետ (Բ Օրին. Դ 35—40, տես նաև Ելք ԼԳ 12, Եսայի ԽԱ 8, Երեմ. ԺԶ 21, Ովսե Զ 3, Սաղմ. ՂԸ 2):

Իսկապես, Հին Կտակարանում ներկայացված սերը հիմնականում բնութագրվում է ընտրության ազատությամբ, սակայն ավելի հազվադեպ նախապատվությամբ ու տեսակավորումով, քանզի այն ընդհանուր առմամբ կախում չունի նախորդող մասնավոր չափերից կամ սահմաններից: Ընդհակառակը, այն անմիջականորեն հեղվում, տարածվում է ուրիշների վրա մեծ առատաձեռնությամբ, առատ է ներելու մեջ, իրեն գործոն է ցույց տալիս ուրիշներին, անգամ թշնամիներին օգնելու գործում, և եթե անհրաժեշտ է, պատրաստ է իր կյանքը զոհաբերելու: Շնորհն ու ողորմությունը դրա էական տարրերն են, հատկապես երբ այն ստորոգվում է Աստծուն: Մարդու տեսանկյունից դիտված, այն բաղկացած է հատկապես պաշտամունքից ու «ես»ի նվիրված հնազանդությունից և կապված է երջանիկ գոհության վերաբերմունքի հետ: Թեև այն երբեմն կարող է խստորեն կաշկանդվել օրինական ու ծիսական չափանիշներով, սակայն բացարձակ ճշմարիտ է մընում այն, որ Ուխտի կողմերը պարտավորություններ ունեն միմյանց նկատմամբ, որովհետև այս հավատարմությունը պետք է ապացուցվի պատվիրանների կատարմամբ ու Աստծո ծառայությամբ:

Ուրեմն թվում է, թե սիրո Հինկտակարանյան ըմբռնումն արդեն պարունակում է շատ բան այն գծերից, որոնք առաջին անգամ հայտնվում են Նոր Կտակարանի agape-ի գաղափարի մեջ: Այս առումով մենք լիովին իրավացի ենք, երբ ասում ենք, որ Նոր Կտակարանում սիրո մասին հայտնված ուսմունքը նախապատրաստված է Հին Կտակարանում: Մինչդեռ եթե մենք մեզ սահմանափակենք Հին Կտակարանի մեջ, շատ հարցեր մեզ համար կմընան անլուծելի, օրինակ՝ թե ինչ հարաբերության մեջ են օրենքն ու շնորհը կամ ընտրությունն ու ազատությունը, և հատկապես այն արմատական հիմնահարցը, թե ինչպես կարող է մարդը փրկություն ձեռք բերել և ըստ այդմ մաս ունենալ աստվածային սիրուց, երբ օրենքը ոչ մի իրական փրկություն չի կարող առաջարկել:

Միևնույն ժամանակ չի կարելի ասել (թեև այսօր շատերը փորձում են), թե Հին Կտակարանի կրոնը ցայտուն հակադրության մեջ է Նոր Կտակարանի հետ, որովհետև, ի տարբերություն վերջինի, այն ներշնչված է ոչ թե սիրով, այլ բացարձակապես երկյուղով: Անկասկած, սերն այնքան գերակշիռ դեր չի խաղում Հին Կտակարանյան գործերում, ինչպես օրինակ կյանքի, զորության ու արդարության գաղափարը, որն ավելի համատեղելի է սեմական մտածողության հետ: Սակայն անգամ այստեղ սիրո գաղափարը հակում է այս գաղափարների վրա, և այն այնքան էլ թույլ չէ, որ տեսանելի չլինի:

Այսպես, վաղ Իսրայելում Աստծո գաղափարը հիմնականում բնութագրվում էր Եհովայի բացարձակ անդրանցական անսահմանությամբ ու ամեն ինչ ընդգրկող զորությամբ, որը հայտնվում է Իր հոյակապ փառքի մեջ՝ Իր արդարության հետ: Աստծո արդարությունը անսասանելի է, քանզի ամենազոր է, որը սակայն երբեմն իր հերթին բարության, անգամ կարեկցանքի երանգ է ստանում (Սաղմ. ՀԱ 2, 15—19, 24, 9Ե 11): Բայց ամեն ինչից վեր ամենքի համար ապահովված ու նրանց վերջնական ճակատագիրը նախորոշող Եհովայի հայրական սերն է, որ սահմանում է Աստծո բնության ճըշ-

մարիտ հայտնությունը, որին մարդն իր հերթին պետք է պատասխանի՝ Նրան գոհությամբ ու հնազանդությամբ սիրելով, ինչպես նաև միմյանց ընկատմամբ փոխադարձ օգնության ու գթության սիրո ցուցադրումով: Հին Կտակարանում աստվածային սիրո և նրա խորքերի հիմնական գաղափարը կարող ենք գտնել Սիրաքի որդի Հեսուի խոսքի մեջ. «Զի որպէս մեծութիւն նորա, նոյնպէս եւ ողորմութիւն նորա» (Սիրաք Բ 18):

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ